

գիւղի կէտը, այսինքն 12 տուն, որոնք կաթուղիկ էին, դարձել են հայ եկեղեցին,

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հունգարիայի հայ կաթուղիկները. «Առարատի» հսկաները ամսատնտեսական, առնելով Հանդէս ամսօրեայից, համառօտ տեղեկութիւն էինք տուել այն ջանքերի մասին, որ Հունգարիայի կաթուղիկ հայերը գործ են դրել յատուկ հայ կաթուղիկ եպիսկոպոս ունենալու համար.

Հունգարիայի հայերը 15—20 հազար են, ցրուած ամբողջ երկրի քաղաքներում և գիւղերում. Ամենահայաշատ քաղաքը—Կերլա, ուր մի ժամանակ 7000-ից աւելի հայեր կային, այժմ, 1910 թուի պաշտօնական ցոցակով, միայն 1240 հայ ունի. Վայրավատին հայերը լինելով կաթուղիկ, մոռանալով ազգային լեզուն ու սովորութիւնները, իբրեւ հայ՝ կորչելու վտանգի մէջ են, ձուլուելով իրանցից զօրեղ տարրերի հետ խառն ամուսնութիւններով և այլ պատահականութիւններով.

Նրանք, որոնց մէջ ազգային զգացումը դեռ վառ է, ձգտում են ունենալ հայ եպիսկոպոս, որպէսզի սա հսկէր ազգային սովորութիւնների, հայ լեզուով ժամակարգութեան և հայածէս արարողութիւնների անթերի կատարման վերայ, յուսալով, թէ այդպիսով վայրավատին հայ կաթուղիկ այս հատուածի կորստեան առաջը կառնուի.

Իրագրւները հաղորդում են, որ անցեալ դեկտեմբերին հունգարահայերի կողմից Վեննայի Մխիթարեան միաբանութեան արքա Գովրիկեան արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ մի պատգամաւորութիւն է ներկայացել Հունգարիայի Կրօնից նախարար Զիչի կոմսին, որը ռիւսով ընդունել է պատգամաւորներին և հաճութեամբ լսելով նրանց աղերսը, յայտնել է թէ խնդրի վերջնական լուծումն պապի հաւանութիւնից է կախուած. իսկ հայ կաթուղիկ համայնքը հաւատացած է, որ պապի կողմից արգելք չի լինի.